ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է արտոնագրային վճարի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վճարողների շրջանակը, արտոնագրային վճարի չափը և վճարման կարգը:

Հոդված 2. Արտոնագրային վճարի հասկացությունը

Արտոնագրային վճարը սույն օրենքով սահմանված չափերով և ժամկետներում սույն օրենքով նախատեսված գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ) համար[*2)] ավելացված արժեքի հարկին (այսուհետ՝ ԱԱՀ) փոխարինող պետական բյուջե մուծվող պարտադիր և անհատույց վճար է:

Հոդված 3. Հարկային արտոնությունների կասեցումը

*Արտոնագրային վճար վճարողների համար սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների մասով կասեցվում են ԱԱՀ-ի գծով հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները:[*2)]*

Հոդված 4. Արտոնագրային վճար վճարողները

1. *Արցախի*[*7)] Հանրապետությունում արտոնագրային վճար վճարող են համարվում իրենց հաշվառման (բնակության, գործունեության իրականացման) վայրի հարկային մարմիններին սույն օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով դիմում-հայտարարություն ներկայացրած և սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պայմանները բավարարող՝

1) բացառապես սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 1-ում ընդգրկված գործունեության տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք.

2) բացառապես սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելվածներ N 1-ում և N 2-ում ընդգրկված գործունեության տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձինք:

2. Արտոնագրային վճար վճարող կարող են համարվել այն ֆիզիկական անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ՝ որպես վարձու աշխատող կատարած աշխատանքների), ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել *12 000 000 ՀՀ դրամը*[*9)]:

3. Արտոնագրային վճար վճարողներ չեն կարող համարվել այն ֆիզիկական անձինք՝

1) որոնք իրենց գործունեության իրականացման համար օգտագործում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը.

2) որոնք արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային մարմին դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվան նախորդ և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին իրականացրել են *Արցախի*[*7)] Հանրապետության տարածք «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծում.

3) *(ուժը կորցրած է ճանաչվել)* [*9)]

4) որոնք հանդիսանում են համատեղ գործունեության պայմանագրի (բացառությամբ գյուղատնտեսական արտադրանքի արտադրության) կողմ.

5) որոնց պատկանում է այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) 20 և ավելի տոկոսը.

6) որոնց գործունեությունը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների) իրականացվում է մեկից ավելի վայրում.

7) որոնք արտոնագրային վճար վճարող համարվելու համար հարկային մարմին դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա դրությամբ *Արցախի*[*7)] Հանրապետության պետական բյուջեի հանդեպ ունեն 100 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ (այդ թվում՝ տույժերի և տուգանքների գումարը):

3.1. Առևտրական գործունեություն իրականացնող արտոնագրային վճար վճարողը դադարում է համարվել այդպիսին, եթե հարկային տարվա ընթացքում թույլ է տվել ապրանքների

մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պահանջների խախտման երկրորդ դեպք: Սույն մասում նշված դեպքում արտոնագրային վճար վճարողը դադարում է համարվել այդպիսին մինչև խախտման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը:[*10)]

4. Սույն օրենքի իմաստով վայր չեն համարվում ֆիզիկական անձի գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման վայրերը, եթե դրանցում չեն իրականացվում սույն օրենքի հավելվածներով սահմանված գործունեության տեսակները:

Հոդված 5. Արտոնագրային վճար վճարող համարվելու համար դիմում-հայտարարություն ներկայացնելը և հաշվառվելը

1. Սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) արտոնագրային վճար վճարող համարվելու համար իրենց հաշվառման (բնակության, գործունեության իրականացման) հարկային մարմին են ներկայացնում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 3-ում սահմանված ձևով դիմում-հայտարարություն՝ *մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող ֆիզիկական անձինք՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը*[*1)], որտեղ նշում են՝

1) արտոնագրային վճար վճարողի՝

ա. անունը և ազգանունը,

բ. անձնագրային տվյալները,

գ. սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում).

2) արտոնագրային վճարով հարկվող գործունեություն իրականացնելու ժամանակահատվածը.

3) գործունեության իրականացման՝

ա. տեսակը (տեսակները),

բ. վայրը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների):

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմանները բավարարող անհատ ձեռնարկատերերը տվյալ տարվա որևէ ժամանակահատվածում (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) արտոնագրային վճար վճարող համարվելու համար իրենց հաշվառման հարկային մարմին են ներկայացնում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 4-ում սահմանված ձևով դիմում-հայտարարություն՝ *մինչև գործունեություն իրականացնելը, իսկ գործունեության տվյալ տեսակի համար համապատասխան արտոնագիր ունեցող անհատ ձեռնարկատերերը՝ մինչև նախկին արտոնագրով նախատեսված ժամանակահատվածից հետո գործունեության տվյալ տեսակը շարունակելը*[*1)], որտեղ նշում են՝

1) արտոնագրային վճար վճարողի՝

ա. անունը և ազգանունը,

բ. պետական գրանցման վկայականի համարը,

գ. հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ).

2) արտոնագրային վճարով հարկվող գործունեություն իրականացնելու ժամանակահատվածը.

3) գործունեության իրականացման՝

ա. տեսակը (տեսակները),

բ. վայրը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների):

3. Դիմում-հայտարարություն ներկայացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին տրվում է ՀՎՀՀ՝ «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման [*6)] մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

4. ՀՎՀՀ տրամադրելու օրն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը հաշվառվում է հարկային մարմնում որպես արտոնագրային վճար վճարող և ստանում է սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 5-ում սահմանված ձևի արտոնագիրը: *Ընդ որում, «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման* [*6)]*մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ՀՎՀՀ տրամադրելու օրվա ընթացքում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 5-ով սահմանված ձևի արտոնագիր չտրամադրելու դեպքում, արտոնագիրը համարվում է տրամադրված ՀՎՀՀ տրամադրելու օրը, եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը, սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան, կատարել է արտոնագրային վճարի* [*2)] *վճարում:*[*7)]

5. Դիմում-հայտարարություն ներկայացնելու օրն անհատ ձեռնարկատերը հաշվառվում է հարկային մարմնում որպես արտոնագրային վճար վճարող և ստանում է սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 6-ում սահմանված ձևի արտոնագիրը: *Ընդ որում, դիմում-հայտարարությունը ներկայացնելու օրվա ընթացքում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 6-ով սահմանված ձևով արտոնագիր չտրամադրելու դեպքում արտոնագիրը համարվում է տրամադրված դիմում-հայտարարությունը ներկայացնելու օրը, եթե անհատ*

ձեռնարկատերը, սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան կատարել է արտոնագրային վճարի[*2)] *վճարում:* [*1)]

6. Յուրաքանչյուր ֆիզիկական անձին յուրաքանչյուր ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար տրվում է մեկ արտոնագիր:

7. Որևէ ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար արտոնագիր ստացած ֆիզիկական անձին այդ ժամանակահատվածն ամբողջությամբ կամ մասնակի ներառող ժամանակահատվածի համար նոր արտոնագիր (եռամսյակային, կիսամյակային, ինն ամսվա, տարեկան) չի տրամադրվում, *բացառությամբ գործունեության վայրի (ավտոտրանսպորտային միջոցի) փոփոխության դեպքի* [*9)]:

8. Արտոնագրի գործողության ժամկետում գործունեության վայրի (ավտոտրանսպորտային միջոցի) փոփոխության դեպքում արտոնագրային վճար վճարողը պարտավոր է դիմել հարկային մարմին՝ արտոնագրի փոփոխության համար՝ վերադարձնելով արտոնագրի իր օրինակը: Հարկային մարմինը դիմումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում գործունեության վայրի (ավտոտրանսպորտային միջոցի) փոփոխության ամսաթվից մինչև տվյալ ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) ավարտը ներառող ժամանակահատվածի համար արտոնագրային վճար վճարողին է տրամադրում նոր արտոնագիր: Սույն մասում նշված արտոնագրի տրամադրման նպատակով սույն օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան արտոնագրային վճարի վճարում չի կատարվում: [*9)]

Հոդված 6. Արտոնագրային վճարի հարկման օբյեկտը և չափը

1. Արտոնագրային վճարի հարկման օբյեկտ են համարվում սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 1-ում և N 2-ում ընդգրկված գործունեության տեսակները, որոնց իրականացման արդյունքում ֆիզիկական անձն ստացել է կամ նպատակ է ունեցել ստանալ եկամուտ:

2. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը սահմանվում է սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 1-ում և N 2-ում սահմանված եռամսյակային չափերից ելնելով: Սույն օրենքի հավելված N 2-ում սահմանված գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի եռամսյակային չափերը որոշվում են մեկ միավորի արտոնագրային վճարի եռամսյակային դրույքաչափի և արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող մեծության արտադրյալով:

3. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը սահմանվում է արտոնագրային վճարի եռամսյակային չափի և տվյալ գործունեության տեսակի համար տվյալ արտոնագրում նշված ժամանակահատվածում ներառված եռամսյակների թվի արտադրյալով՝ դրամական արտահայտությամբ:

3.1. Գործունեությունը նոր սկսող (վերսկսող)[*9)] *անհատ ձեռնարկատերերի կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի չափը որոշվում է գործունեությունը սկսելու (վերսկսելու)*[*9)] *ամսաթիվը ներառող առաջին ոչ ամբողջական եռամսյակի համար սույն մասով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային վճարի և դիմում-հայտարարությամբ ներկայացված՝ տվյալ տարվա մնացած ամբողջական ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ կամ ինն ամիս) համար սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված արտոնագրային վճարի հանրագումարի չափով:*

Գործունեությունը սկսելու (վերսկսելու)[*9)] *ամսաթիվը ներառող առաջին ոչ ամբողջական եռամսյակի համար արտոնագրային վճարի չափը հաշվարկվում է արտոնագրային վճարի եռամսյակային չափի մեկ երրորդի և գործունեությունը սկսելու (վերսկսելու)*[*9)] *ամսվանից մինչև տվյալ եռամսյակի ավարտը ներառող ամբողջական ամիսների թվի արտադրյալով: Գործունեությունը սկսելու (վերսկսելու)*[*9)] *ամսաթիվը ներառող ամիսն ընդունվում է որպես ամբողջական ամիս՝ անկախ գործունեությունը սկսելու (վերսկսելու)*[*9)] *ամսաթվից:* [*1)]

3.2. (դադարել է գործել 2018 թվականի հունվարի 1-ից): [*5)]

3.3. (դադարել է գործել 2019 թվականի հունվարի 1-ից): [*7)]

3.4. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով սույն օրենքի անբաժանելի մաս համարվող N 1 և N 2 հավելվածներով սահմանված արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս կիրառվում է Ստեփանակերտ քաղաքում՝ 0,5, շրջկենտրոններում և այլ վայրերում՝ 0,3 գործակից: Սույն մասով սահմանված գործակցի կիրառման արդյունքում արտոնագրային վճարի եռամսյակային չափը 1 000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում արտոնագրային վճարը հաշվարկվում է 1 000 ՀՀ դրամի չափով: [*9)]

4. Ընթացիկ տարում սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելու, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձինք՝

1) դադարում են համարվել արտոնագրային վճար վճարող և այդ պահից մինչև ընթացիկ տարվա վերջը չեն կարող հանդիսանալ արտոնագրային վճար վճարող.

2) այդ պահից մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հարկերը [*1), *2)] հաշվարկում և վճարում են անհատ ձեռնարկատերերի համար օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ այդ չափը գերազանցող մասով (բացառությամբ՝ հաշվեգրման եղանակով եկամուտների հաշվարկման և հարկային վնասների փոխանցման դրույթների):

5. Ընթացիկ տարում սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելու, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերը՝

1) դադարում են համարվել արտոնագրային վճար վճարող և այդ պահից մինչև ընթացիկ տարվա վերջը չեն կարող հանդիսանալ արտոնագրային վճար վճարող.

2) այդ պահից մինչև ընթացիկ տարվա վերջն ընկած ժամանակահատվածի համար հարկերը [*2)] հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ այդ չափը գերազանցող մասով:

6. Ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու դեպքում սույն օրենքով սահմանված կարգով վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում տվյալ տարվա [*2), *4)] ԱԱՀ-ի գումարներից և չեն վերադարձվում (անկախ նրանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը), ինչպես նաև հաշվի չեն առնվում արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակաշրջանում ձեռքբերումների գծով կատարված ծախսերը և վճարված (վճարվող) ԱԱՀ-ի գումարները:

Հոդված 7. Արտոնագրային վճար վճարողների կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրումը, այլ հարկերի [*2)] վճարումը

1. Արտոնագրային վճար վճարողները հարկային հաշիվներ դուրս չեն գրում:

2. Արտոնագրային վճար վճարողները չեն հանդիսանում հարկային գործակալներ՝ արտոնագրային վճար վճարողներից եկամուտներ ստացած ֆիզիկական անձանց վրա տարածվում են *«Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով*[*2)] սահմանված դրույթները:

2.1. Առևտրական գործունեություն իրականացնող արտոնագրային վճար վճարողները պարտավոր են, օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, փաստաթղթավորել ապրանքներ ձեռք բերելու գործարքները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից Արցախի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման գործարքները: [*10)]

3. *(ուժը կորցրած է ճանաչվել)* [*2)]

4. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող արտոնագրային վճար վճարողների կողմից կազմակերպություններին, արտոնագրային վճար վճարող չհանդիսացող անհատ ձեռնարկատերերին ծառայություններ մատուցելու դեպքում վերջիններս, որպես հարկային գործակալ, եկամտի վճարման աղբյուրի մոտ եկամտային հարկը պահում (գանձում) են «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով: [*2)]

5. *(ուժը կորցրած է ճանաչվել)* [*2)]

6. Արտոնագրային վճար վճարողների վրա այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքով կարգավորվող հարաբերությունների մասով չեն տարածվում «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով սահմանված դրույթները:

6.1. Արտոնագրային վճար վճարողները «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28[4]-րդ հոդվածով նախատեսված՝ առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր չեն վարում: [*10)]

7. Արտոնագրային վճար վճարողները հարկային մարմիններ օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններ (հաշվարկներ, հայտարարագրեր, տեղեկություններ) չեն ներկայացնում[*2)]:

8. Արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերի համար «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի *3-րդ մասով սահմանված ժամկետները հետաձգվում են*[*9)] *մինչև 2026 թվականի*[*11)] *հունվարի 1-ը*[*4), *7)]:

Հոդված 8. Արտոնագրային վճարի [*2)] վճարման կարգը և ժամկետները

*Արտոնագրային վճար վճարողներն արտոնագրային վճարը [*2)] վճարում են արտոնագիրն ստանալիս:*[*1)]

Հոդված 8.1. Արտոնագրային վճարից ազատումը

1. 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հաշվետու ժամանակահատվածի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար սույն օրենքի անբաժանելի մաս համարվող N 1 և N 2 հավելվածներում նշված գործունեություններն ազատվում են արտոնագրային վճարից: [*11)]

Հոդված 9. Սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված պայմանը խախտելու դեպքում արտոնագրային վճար վճարողները կրում են չգրանցված վարձու աշխատող պահելու դեպքում գործատուների համար օրենքով սահմանված պատասխանատվությունը:

2. *Արցախի*[*7)] Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնող *արտոնագրային վճար*[*1)] վճարող անհատ ձեռնարկատերերը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու դեպքում կրում են օրենքով սահմանված պատասխանատվությունը:

2.1. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված պայմանը խախտելու դեպքում արտոնագրային վճար վճարողները կրում են ապրանքների մատակարարման կամ տեղափոխության գործարքների փաստաթղթավորման պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվություն:[*10)]

3. *(ուժը կորցրած է ճանաչվել)* [*2)]

4. Արտոնագրային վճար վճարողի կողմից՝ տվյալ արտոնագրում չնշված և սույն օրենքի N 1 և N 2 հավելվածներում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում արտոնագրային վճար վճարողից գանձվում է գործունեության այդ տեսակի (տեսակների) և ժամանակահատվածի համար սույն օրենքով սահմանված արտոնագրային վճարը՝ «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով հաշվարկված տույժերի հետ միասին:

5. Արտոնագրային վճար վճարողի կողմից հարկային մարմին արտոնագրային վճար վճարող համարվելու համար ներկայացված դիմում-հայտարարությունում ոչ ճիշտ տեղեկություններ ներառվելու դեպքում վճարվում է տուգանք՝ 50 հազար դրամի չափով:

6. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող արտոնագրային վճար վճարողի կողմից սույն օրենքի N 1 և N 2 հավելվածներում չնշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու փաստը հարկային մարմնի կողմից արձանագրվելու դեպքում անհատ ձեռնարկատերերն այդ գործունեությամբ զբաղվելու պահից մինչև ընթացիկ տարվա վերջն ընկած ժամանակահատվածի համար հարկերը[*2)] հաշվարկում և վճարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները:

7. Սույն հոդվածով նախատեսված տուգանքն ու տույժերը ենթակա են վճարման բյուջե՝ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Հոդված 10. Օրենքի վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է *Արցախի Հանրապետության հարկային մարմինը*[*1),*7)]:

Հոդված 11. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

(հանվել է) [*8),*9)]

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

30 դեկտեմբերի 2011թ.
ք.Ստեփանակերտ
ՀՕ-91-Ն

Հավելված N 1[*3),*6),*8)]
«Արտոնագրային վճարների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի

Ց Ա Ն Կ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ

NN	Գործունեության տեսակները	Արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող մեծությունը	Արտոնագրային վճարի եռամսյակային դրույքաչափը՝ 1 միավորի (հազար ՀՀ դրամ)		
			Ք. Ստեփանակերտում	Շրջկենտրոններում	այլ վայրերում
1.	10 քառակուսի մետր տարածքը չգերազանցող խանութի, կրպակի, տաղավարի (այդ թվում՝ ապրանքների պահպանումն ապահովող այլ տարածքի)[*10)], ավտոկրպակի, մոտոկրպակի, ավտոսայլակի, մոտոսայլակի միջոցով առևտրական գործունեություն	խանութ, կրպակ, տաղավար, ավտոկրպակ, մոտոկրպակ, ավտոսայլակ, մոտոսայլակ	20,0	18,0	10,0
2.	Թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրումների իրականացում, այդ թվում՝				
1)	ներհանրապետական փոխադրումներում	x	20,0	18,0	10,0
2)	Հայաստանի Հանրապետության հետ կապված միջպետական փոխադրումներում	x	30,0		
3.	Բեռնատար մեքենայով բեռնափոխադրումների իրականացում	բեռնատարողություն (տ)	7,0	5,0	3,0
4.	Բնակչության պատվերով կատարվող՝	x	15,0	5,0	2,0
4.1.	հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում				
4.2.	տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն				
4.3.	այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն				
4.4.	փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում				
4.5.	կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում				
4.6.	հագուստի արտադրություն և նորոգում				
4.7.	գլխարկների արտադրություն և նորոգում				
4.8.	գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում				

4.9.	ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում				
4.10.	համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային իրերի նորոգում, ծրագրային սպասարկում				
4.11.	ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում				
5.	Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ	x	15,0	5,0	2,0
6.	Լեզուների ուսուցման դասընթացներ	x	18,0	10,0	3,0
7.	Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ	x	18,0	10,0	3,0
8.	Պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն	x	12,0	5,0	3,0
9.	Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն, կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն	x	12,0	5,0	3,0
10.	Ստեղծագործական գործունեություն	x	12,0	5,0	3,0
11.	Խնջույքավարների գործունեություն	x	35,0	10,0	3,0
12.	Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում	x	12,0	5,0	3,0
13.	Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար	x	12,0	5,0	3,0
14.	Դարբնոցային գործունեություն	x	12,0	5,0	3,0
15.	Արտադպրոցական դաստիարակություն մշակույթի բնագավառում	x	12,0	5,0	3,0
16.	Թիթեղագործական գործունեություն	x	12,0	5,0	3,0
17.	Զոդման գործունեություն	x	54,0	43,0	32,0
18.	Խառատի գործունեություն	x	54,0	43,0	32,0
19.	Զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում	սենյակ	10,0	5,0	3,0

Տարբեր բնակավայրերում թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում կամ բեռնատար մեքենայով բեռնափոխադրում իրականացնելու դեպքում կիրառվում է տվյալ բնակավայրի համար սահմանված արտոնագրային վճարի առավելագույն դրույքաչափը:

Հավելված N 2[*1),*6),*7),*8)]
«Արտոնագրային վճարների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի

Ց Ա Ն Կ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ

NN	Գործունեության տեսակը	Արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող մեծությունը	Արտոնագրային վճարի եռամսյակային դրույքաչափը՝ 1 միավորի (հազար ՀՀ դրամ)		
			Ք. Ստեփանակերտում	Շրջկենտրոններում	այլ վայրերում
1.	Մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպում	ավտոմատ	15,0	12,0	9,0
2.	Վարսավիրական ծառայությունների մատուցում	x	40,0	25,0	20,0
3.	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում, այդ թվում՝ մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով ավտոմեքենաների լվացում	x ավտոմատ	45,0	35,0	25,0
4.	Համակարգչային խաղերի կազմակերպում	մոնիտոր	40,0	25,0	15,0
5.	Բիլիարդ խաղի կազմակերպում	խաղասեղան	75,0	45,0	30,0
6.	Սեղանի թենիս խաղի կազմակերպում	խաղասեղան	30,0	15,0	10,0
7.	Մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպում	ավտոմատ	15,0	12,0	9,0
8.	Մեխանիկական և էլեկտրական մանկական ավտոմեքենաների, հեծանիվների, անվաչմուշկների, սկուտերների, հիրոսկուտերների, հովերբորդների վարձույթ	ավտոմեքենա, հեծանիվ, անվաչմուշկ, սկուտեր, հիրոսկուտեր, հովերբորդ	54,0	32,0	21,0
9.	Անասնաբուժական ծառայությունների մատուցում	x	6,0	6,0	6,0[*12)]

Հավելված N 3[*1),*3),*6),*7),*8)]
«Արտոնագրային վճարների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի

ԴԻՄՈՒՄ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ *(արտոնագրային վճար վճարող համարվելու համար)*	*Փաստաթղթի հերթական համարը* _____ *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*
Ֆիզիկական անձի անունը և ազգանունը	
Անձնագրի տվյալները (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)	
Հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը	
Գտնվելու (բնակության) վայրը	

Ցանկանում եմ իրականացնել գործունեության հետևյալ տեսակը (տեսակները)	***Սկիզբը (ամիս)***	***Ավարտը (ամիս)***	***Գործունեության վայրը***	***Արտոնագրային վճարի չափը (ՀՀ դրամ)***	***Ստորագրությունը***

Թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում կամ բեռնատար մեքենայով բեռնափոխադրում իրականացնելու դեպքում՝ թեթև մարդատար ավտոմեքենայի կամ բեռնատար մեքենայի պետհամարանիշը.

Սույնով հայտարարում եմ, որ՝

1) նախորդ տարվա ընթացքում և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ՝ որպես վարձու աշխատող կատարած աշխատանքների), ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 12 000 000 ՀՀ դրամը.

2) գործունեության իրականացման համար չեմ օգտագործում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը.

3) դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա նախորդ և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին չեմ իրականացրել Արցախի Հանրապետության տարածք «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծում.

4) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի կողմ.

5) ինձ չի պատկանում այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) 20 և ավելի տոկոսը.

6) գործունեությունը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների) չի իրականացվում մեկից ավելի վայրում.

7) դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա դրությամբ Արցախի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ չունեմ 100 000 ՀՀ դրամ և ավելի

ժամկետանց հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ (այդ թվում՝ տույժերի և տուգանքների գումարը):

Դիմումատուի ստորագրությունը՝	*Հարկային մարմնի պետ՝* *Տեսուչ՝*

Դիմում-հայտարարության ներկայացման օրը

«___» _____ 20___ թ.

*Հավելված N 4[*1),*7)]*
«Արտոնագրային վճարների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի

ԴԻՄՈՒՄ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (արտոնագրային վճար վճարող համարվելու համար)	Փաստաթղթի հերթական համարը _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Անհատ ձեռնարկատիրոջ անունը և ազգանունը	
Պետական հաշվառման վկայականի համարը	
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
Գտնվելու (բնակության) վայրը	

Ցանկանում եմ իրականացնել գործունեության հետևյալ տեսակը (տեսակները)	Սկիզբը (ամիս)	Ավարտը (ամիս)	Գործունեության վայրը	Արտոնագրային վճարի չափը (ՀՀ դրամ)	Ստորագրությունը

Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում կամ բեռնատար մեքենայով բեռնափոխադրում իրականացնելու դեպքում՝ թեթև մարդատար ավտոմեքենայի կամ բեռնատար մեքենայի պետհամարանիշը.

Սույնով հայտարարում եմ, որ՝

1) նախորդ տարվա ընթացքում և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների (բացառությամբ՝ որպես վարձու աշխատող կատարած աշխատանքների), ինչպես նաև վարձավճարների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) չի գերազանցել 12 000 000 ՀՀ դրամը.

2) գործունեության իրականացման համար չեմ օգտագործում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը.

3) դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվան նախորդ և (կամ) ընթացիկ տարվա որևէ պահին չեմ իրականացրել Արցախի Հանրապետության տարածք «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծում.

4) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի կողմ.

5) ինձ չի պատկանում այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) 20 և ավելի տոկոսը.

6) գործունեությունը (բացառությամբ՝ իր բնույթով պայմանավորված իրականացման մշտական վայր չունեցող գործունեության տեսակների) չի իրականացվում մեկից ավելի վայրում.

7) դիմում-հայտարարություն ներկայացնելու օրվա դրությամբ Արցախի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ չունեմ 100 000 ՀՀ դրամ և ավելի

ժամկետանց հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ (այդ թվում՝ տույժերի և տուգանքների գումարը):

Դիմումատուի ստորագրությունը՝	*Հարկային մարմնի պետ՝* *Տեսուչ՝*

Դիմում-հայտարարության ներկայացման օրը

«___» _____ 20___ թ.

Հավելված N 5[*3),*6),*7),*8)]
«Արտոնագրային վճարների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի

Արցախի Հանրապետության հարկային մարմին

ԱՐՏՈՆԱԳԻՐ N_____

____ _____ 20___ թ.

Սույն արտոնագիրը տրվում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին

_____
(անունը, ազգանունը)

_____ հաշվառված____ _____ 20___ թ. ՀՎՀՀ_____ և

հավաստում է այն մասին, որ նա 20___թ. ընթացքում հանդիսանում է արտոնագրային վճար վճարող

Գործունեության տեսակները	**Սկիզբը (ամիս)**	**Ավարտը (ամիս)**	**Գործունեության վայրը**

Թեթև մարդատար ավտոմեքենայով ուղևորափոխադրում կամ բեռնատար մեքենայով բեռնափոխադրում իրականացնելու դեպքում՝ թեթև մարդատար ավտոմեքենայի կամ բեռնատար մեքենայի պետհամարանիշը.

Հարկային մարմնի պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

**9)*

Հավելված N 6
«Արտոնագրային վճարների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
օրենքի

Արցախի Հանրապետության հարկային մարմին[*7)]

Ա Ր Տ Ո Ն Ա Գ Ի Ր Ն _____

_____ _____ 20___թ.

Սույն արտոնագիրը տրվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձին

_____
(անունը, ազգանունը)

_____ հաշվառված _____ _____ 20___թ. ՀՎՀՀ _____ և

հավաստում է այն մասին, որ նա 20___թ. ընթացքում հանդիսանում է արտոնագրային վճար վճարող

Գործունեության տեսակները	Սկիզբը (ամիս)	Ավարտը (ամիս)	Գործունե-ության վայրը

Թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում կամ բեռնատար մեքենայով բեռնափոխադրում իրականացնելու դեպքում՝ թեթև մարդատար ավտոմեքենայի կամ բեռնատար մեքենայի[*9)] *պետհամարանիշը* [*1)]

Հարկային մարմնի պետ _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*7)]

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 7-րդ հոդվածը, որը վերաբերում է «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3.3-րդ մասին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված գործակիցը կիրառվում է 2018 թվականի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*11)]

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 3-րդ հոդվածը, որը վերաբերում է «Արտոնագրային վճարների մասին» օրենքի անբաժանելի մաս համարվող N 1 և N 2 հավելվածներով նախատեսված գործունեություն իրականացնողներին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քսանօրյա ժամկետում, կատարվում է Օրենքի անբաժանելի մաս համարվող N 1 և N 2 հավելվածներով նախատեսված գործունեություն իրականացնողների 2021 թվականի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար հաշվարկված արտոնագրային վճարի վերահաշվարկ, և ավել վճարված գումարն ուղղվում է հարկ վճարողի ապագայում առաջացող արտոնագրային վճարի մարմանը և (կամ) վերադարձվում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*12)]

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 2-րդ հոդվածը, որը վերաբերում է «Արտոնագրային վճարների մասին» օրենքի N 2 հավելվածի 9-րդ տողին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 2.

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հոկտեմբերի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Օրենքի N 2 հավելվածի 9-րդ տողով նախատեսված գործունեության տեսակ իրականացնող անհատ ձեռնարկատերերը արտոնագրային վճար վճարող համարվելու համար առաջին անգամ դիմում-հայտարարությունները իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 20 օրվա ընթացքում:

**1) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.12.12թ. ՀՕ-40-Ն) խմբագրությամբ:*

**2) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.12.13թ. ՀՕ-94-Ն) խմբագրությամբ:*

**3) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (26.11.14թ. ՀՕ-52-Ն) խմբագրությամբ:*

**4) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (18.12.14թ. ՀՕ-62-Ն) խմբագրությամբ:*

**5) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (30.06.16թ. ՀՕ-21-Ն) խմբագրությամբ:*

**6) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (22.12.16թ. ՀՕ-41-Ն) խմբագրությամբ:*

**7) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ օրենքի (21.12.17թ. ՀՕ-61-Ն) խմբագրությամբ:*

**8) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ օրենքի (26.09.18թ. ՀՕ-43-Ն) խմբագրությամբ:*

**9) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (20.12.18թ. ՀՕ-88-Ն) խմբագրությամբ:*

**10) «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ օրենքի (14.06.19թ. ՀՕ-62-Ն) խմբագրությամբ:*

**11) «Արտոնագրային վճարների մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի (11.02.21թ. ՀՕ-21-Ն) խմբագրությամբ:*

**12) «Արտոնագրային վճարների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի (29.09.22թ. ՀՕ-53-Ն) խմբագրությամբ:*